ԻՆՉՊԵՍ ԼՐԱՑՆԵԼ SAR 7 ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԶԵԿՈՒՅՑԸ

Կանխիկ դրամական օգնության և CalFresh (նախկինում՝ «Պարենային կտրոններ») նպաստների համար

Պահպանեք այս ձևը, որը կօգնի լրացնել Ձեր SAR 7 զեկույցը (Իրավունակության կարգավիճակի զեկույցը): Եթե զեկույցը լրացնելու հարցում օգնության կարիք ունենաք, զանգահարեք **վարչաշրջանի գրասենյակ**:

- Եթե չուղարկեք ավարտուն զեկույց, Ձեզ հատկացվող նպաստները կարող են հետաձգվել, փոխվել կամ դադարեցվել կամ հանգեցնել գերավճարման, որը պարտավոր կլինեք վերադարձնել: Դուք պետք է պատասխանեք բոլոր հարցերին և, պահանջի դեպքում, կցեք հիմնավորող փաստաթղթեր:
- **Անհրաժեշտության դեպքում կցեք առանձին թերթ**:
- **Ձեր զեկուցած փաստերը կարող են հանգեցնել նպաստների ավելացման, նվազեցման կամ դադարեցման**:

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Ի՞նչ հաճախականությամբ է հարկավոր լրացնել SAR 7 **ձևը**:
Տարին մեկ անգամ (Ձեր դիմումից կամ տարեկան երկարաձգումից 6 ամիս հետո): Վարչաշրջանը Ձեզ կհայտնի SAR 7-ի ներկայացման ժամկետը:

Զեկուցում Ձեր տանն ապրող մարդկանց մասին
Եթե Ձեր ընտանիքը կանխիկ դրամական օգնություն **է ստանում, զեկուցեք փաստեր հետևյալ անձանց մասին՝**

- բոլոր **երեխաները**՝ հարազատ, որդեգրված և խորթ.
- բոլոր **ծնողները**՝ կենսաբանական, որդեգրած և խորթ.
- երեխայի գործում այլ **օգնություն ստացող ազգականներ**.
- **Դուք ինքներդ** և Ձեր **ամուսինը կամ գրանցված քաղաքացիական զուգընկերը**..
- ցանկացած անձ, ով **ժամանակավորապես բացակայում է** տնից:

Եթե Ձեր ընտանիքը CalFresh է ստանում (կանխիկ դրամական օգնության հետ միասին կամ առանց այդ օգնության), Դուք նաև պարտավոր եք զեկուցել հետևյալ անձանց մասին՝

- բոլոր երեխաները.
- բոլոր առնչվող չափահասները.
- ընտանիքի բոլոր մյուս անձինք, ովքեր կանոնավորապես սնունդ են գնում և պատրաստում Ձեզ հետ:

Նպաստները դադարեցնելու խնդրանք
- SAR 7 ձևում լրացրեք նպաստների դադարեցման վերաբերյալ բաժինը, **միայն** եթե ուզում եք դադարեցնել որևէ նպաստ: Նշեք այն նպաստները, որոնք ուզում եք դադարեցնել, և ստորագրեք ու թվագրեք SAR 7 ձևը: Եթե ուզում եք դադարեցնել որոշ նպաստներ և պահել մյուսները, ապա պետք է լրացնեք SAR 7-ի մասնաբաժինը:
- Ձեր նպաստները դադարեցնել կարող եք նաև վարչաշրջանի գրասենյակին դիմելով:
- Եթե խնդրեք դադարեցնել Ձեր կանխիկ դրամական օգնությունը, ապա Ձեր Medi-Cal նպաստները նույնպես կդադարեցվեն կամ կփոխվեն: Դուք իրավունք չեք ունենա ստանալու Medi-Cal, կամ գուցե պահանջվի վճարել ծախսի մի մասը:

ԻՆՉՊԵՍ ԼՐԱՑՆԵԼ ՑՈՒՑՈՒԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՐՑԸ
Տեղեկություններ կենցաղի մասին (հարց 1)
Նշեք Ձեզ հետ ապրողներին վերաբերող բոլոր փոփոխությունները, Ձեր հասցեի փոփոխությունները (ներառյալ բնակարանի համարի փոփոխությունները և վերջին զեկույցից հետո բնակարանային ծախսերում տեղի ունեցած փոփոխությունները): Դա վերաբերում է՝ նորածիններին, տնից ժամանակավորապես բացակայող անձանց, մահացածներին, հիվանդանոց ընդունվածներին կամ այնտեղից դուրս գրվածներին, հաստատություն (ներառյալ կալանավայր կամ բանտ) ուղարկվածներին կամ այնտեղից դուրս եկածներին և այլն:

Հասցեի կամ բնակարանային ծախսերի փոփոխություն (հարցեր 2 և 3)
Մեզ փաստեր տրամադրեք վերջին զեկույցից հետո Ձեր հասցեի կամ հեռախոսահամարի բոլոր փոփոխությունների մասին: Եթե CalFresh նպաստներ եք ստանում, Ձեզնից կարող են նոր բնակարանային ծախսերը, օրինակ՝ վարձավճարն ու կոմունալ ծառայությունների ծախսերը ապացուցող փաստաթղթեր պահանջել: Եթե ծախսերն աճել են տեղափոխման արդյունքում, անպայման նշեք նոր գումարները: Դա կարող է ավելացնել Ձեր CalFresh նպաստները:

Փախուստ և փորձաշրջանի կամ վաղաժամկետ ազատման պայմանների խախտում (միայն CalWORKs) (հարց 4)
Այս հարցը վերաբերում է արդեն Ձեզ հետ ապրող բոլոր անձանց, ում հետ նշվածներից որևէ մեկը տեղի է ունեցել Ձեր վերջին զեկույցից հետո: Այն ՆԱԵՎ վերաբերում է Ձեր տնային տնտեսություն տեղափոխված բոլոր անձանց, ովքեր փախչում են օրենքից կամ խախտել են փորձաշրջանի կամ վաղաժամկետ ազատման պայմանները: Անհրաժեշտ է ներկայացնել անձի անունը, ձերբակալության հրամանի կամ խախտման վայրն ու ամսաթիվը:

Եթե նախկինում այդ տեղեկությունները հայտնել եք վարչաշրջանին, հարկ կլինի զեկուցել այդ նույն տեղեկությունները:

Ծախսեր (տեղեկություններ CalFresh-ի վերաբերյալ) (հարցեր 5, 6 և 7)
Այս հարցերը կարող են փոխել Ձեր CalFresh նպաստները: Այդ տեղեկությունները կարող են նվազեցնել մեր կողմից հաշվի առնվող եկամուտը և ավելացնել Ձեր նպաստները: 60 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց կամ հաշմանդամների պարագայում հայտնեք Ձեր կանխիկ բժշկական ծախսերում կատարված բոլոր փոփոխությունները: CalFresh նպաստներ ստացող ընտանիքի դեպքում զեկուցեք երեխայի կամ չափահաս խնամարկյալի խնամքի համար անհրաժեշտ ծախսերը, որոնք պետք է կատարեք, որպեսզի կարողանաք աշխատել կամ վերապատրաստման դասընթաց անցնել: Եթե վճարում եք երեխայի ապրուստավճար, զեկուցեք վճարված գումարի ցանկացած փոփոխության մասին: **Կցեք հիմնավորող փաստաթղթեր, որպեսզի որոշեք արդյոք կարող եք ավելի շատ նպաստներ ստանալ**:

Գույք (հարց 8)
Թվարկեք բոլոր նրանց, ովքեր ստացել, գնել, վաճառել, փոխանակել կամ նվիրել են որևէ գույք: Գույքը ներառում է՝ հող, տուն, ավտոմեքենաներ, բանկային հաշիվներ, դրամական վճարումներ (վիճակախաղի կամ խաղատան շահումներ, հետադարձ ուժ ունեցող սոցիալական ապահովության նպաստ, հարկի վերադարձումներ և այլն): Նշեք նաև նվերներն ու փոխառությունները: Նշեք, թե ում է պատկանել գույքը, գույքի տեսակը, երբ է այն փոխվել, և գույքի արժեքը (ձևաթղթում նշված «գումարը»): Նշեք համապատասխան վանդակը: **Կցեք հիմնավորող փաստաթղթեր**:

Եթե արդեն զեկուցել եք և ներկայացրել եք նոր գույքի փաստաթղթերը, կարիք չկա նորից զեկուցելու, եթե որևէ փոփոխություն տեղի չի ունեցել:

Աշխատանքային գործունեությունից ստացված եկամուտ (հարց 9)
Թվարկեք զբաղվածությունից (աշխատանքից) ստացված **բոլոր** եկամուտները՝ աշխատավարձեր, թեյավճարներ, մասնագիտական ուսուցման կրթաթոշակներ, նպաստներ կամ այլ վաստակ, որոնք որևէ մեկը ստացել է զեկույցի ամսում: Նշեք գումարը նախքան հարկերը և պահումները (համախառն գումարը): **Կցեք հիմնավորող փաստաթղթեր**:

- **Աշխատանքային գործունեությունից ստացված եկամուտը** ներառում է հետևյալը, բայց չի սահմանափակվում դրանցով՝ վարձատրության վճարագրեր, կանխիկ եկամուտ, արձակուրդային վճար, պարգևավճարներ, ինքնազբաղվածությունից, ժամանակավոր աշխատանքից կամ վերապատրաստման դասընթացից ստացված եկամուտ, վարձակալությունից ստացված եկամուտ, տնային աջակցության ծառայություններից (IHSS) ստացված եկամուտ և այլն:
- **Ինքնազբաղ** լինելու դեպքում կարող եք ծախսերի 40%-ի հանում ստանալ՝ առանց հիմնավորող փաստաթուղթ ներկայացնելու: Եթե Ձեր ծախսերն ավելի մեծ են և ուզում եք հայտարարել փաստացի ծախսերը, բոլոր ձեռնարկատիրական ծախսերը թվարկեք առանձին թերթի վրա: Կցեք հիմնավորող փաստաթղթեր, եթե հաշվի եք առնում փաստացի ծախսերը:
- **Աշխատանքի կորստի ապացույցը** ներառում է հետևյալը, բայց չի սահմանափակվում դրանցով՝ նամակ Ձեր գործատուից, UIB պարգևտրման նամակ, կամ, եթե որևէ այլ ապացույց մատչելի չէ, ապա գրավոր ստորագրված հայտարարագիր:

Աշխատանքային գործունեությունից ստացված եկամտի փոփոխություններ (հարց 10)
Մեզ անհրաժեշտ է իմանալ՝ արդյոք եկամուտը շարունակվելու է, թե կլինեն փոփոխություններ: Եթե Ձեր եկամուտը նույնն է մնալու, մենք հաշվի կառնենք այն գումարը, որը զեկուցում եք որպես հաջորդ 6 ամսվա եկամուտ: Եթե գիտեք, որ եկամտի փոփոխություններ են լինելու, մեզ ասեք՝ ինչու, ինչքան և երբ: Եթե վստահ չեք, կարող եք փոփոխության մասին հայտնել այն ժամանակ, երբ դա տեղի ունենա: Օրինակ՝ եթե Ձեզ առաջարկեն աշխատանք, և Դուք իմանաք Ձեր ժամավճարն ու ժամանակացույցը, ապա պետք է զեկուցեք այդ մասին, նույնիսկ եթե դեռ չեք սկսել աշխատել կամ չեք վարձատրվել: Բացի այդ, եթե աշխատում եք ըստ կանչի կամ ունեք խիստ փոփոխական ժամանակացույց, այդ տեղեկությունները գրեք Ձեր SAR 7 ձևի մեջ:

Աշխատանքային գործունեությունից ստացված եկամուտը ներառում է հետևյալը, բայց չի սահմանափակվում դրանցով՝ վճարագրի կոնակներ, վճարագրերի պատճեններ, գործատուի տեղեկանքներ և այլն, կամ հարկային հայտարարագրեր ինքնազբաղ լինելու դեպքում:

Այլ եկամուտ (հարց 11)
Թվարկեք այլ աղբյուրներից ստացված **բոլոր** եկամուտները: **Կցեք հիմնավորող փաստաթղթեր**:

- **Անաշխատունակության նպաստներից կամ կենսաթոշակից ստացվող եկամուտը** ներառում է SSI, սոցիալական ապահովության վճար, վետերանների հաշմանդամության նպաստներ, արտադրական ցնցվածքի փոխհատուցում կամ անաշխատունակության կամ կենսաթոշակի անցնելու կապակցությամբ տրվող ցանկացած այլ վճարներ:
- **Գործազրկության նպաստներ**
- **Այլ** վիճակախաղերի շահումներ, ապահովագրությունից կամ դատական կարգավորումներից ստացվող գումարներ, նվերներ կամ փոխառություններ, վարձի վճարման օգնություն, անվճար բնակարան, կենցաղային ծառայություններ, հագուստ կամ սննդամթերք (կամ եթե ինչ-որ մեկը վճարել է բոլոր այդ ծախսերը Ձեր փոխարեն), կամ որևէ այլ բան:
- **Այլևս ուրիշ դրամ չստանալու ապացույցը ներառում է հետևյալը**, բայց չի սահմանափակվում դրանցով՝ նամակ նպաստներ տրամադրողից կամ, եթե որևէ այլ ապացույց մատչելի չէ, ապա գրավոր ստորագրված հայտարարագիր:

Նշեք՝ (1) ով է ստացել եկամուտը, (2) որտեղից են ստացել փողը և (3) ստացված գումարը:

Այլ եկամտի փոփոխություններ (հարց 12)
Տեղեկացրեք մեզ, եթե կարծում եք, որ եկամուտը կշարունակվի, կամ եթե գիտեք, որ այն կփոխվի: Եթե գիտեք, որ կփոխվի, նշեք, թե երբ է փոխվելու և որքան:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵ՛Ս ՄՅՈՒՍ ԿՈՂՄԸ

Այլ տեսակի եկամուտները ներառում են հետևյալը, բայց չեն սահմանափակվում դրանցով՝ վճարագրի կոնակներ, վճարագրերի պատճեններ, գրություն նպաստների շնորհման մասին այն գործակալությունից, որտեղից ստացել եք փողը, և այլն:

Ցանկացած այլ փոփոխություններ (միայն CalWORKs) (հարց 13)
Թվարկեք այլ հանգամանքներ, որոնք կարող են փոխել Ձեր իրավունակությունը կամ նպաստների գումարը: Ձեկուցելու ենթակա փոփոխությունների օրինակները տրված են SAR 7-ում:

ՈՎ ՊԵՏՔ Է ՍՏՈՐԱԳՐԻ SAR 7 ՁԵՎԸ
- **Կանխիկ դրամական օգնության** դեպքում. Դուք և օգնություն ստացող Ձեր ամուսինը, գրանցված քաղաքացիական զուգընկերը կամ մյուս ծնողը (կանխիկ դրամական օգնություն ստացող երեխաների), եթե նրանք ապրում են Ձեր տանը:
- CalFresh-ի դեպքում. ընտանիքի գլուխը, լիազոր ներկայացուցիչը կամ ընտանիքի պատասխանատու անդամը:
- **Երկուսի դեպքում**. զեկույցը լրացնել օգնող ցանկացած այլ անձ, թարգմանիչը կամ Ձեր նշանը դնելու վկան:

ԻՆՉ ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆՔ, ԵՐԲ ԱՍՈՒՄ ԵՆՔ՝

ՕՐԵՆՔԻՑ ՓԱԽՉՈՂ. Անձը համարվում է օրենքից խուսափող կամ փախչող, եթե ձերբակալության հրաման է տրվել, և անձը գիտեր կամ կարող էր իմանալ փաստերից, որ իրավապահ մարմինները փնտրում էին իրեն:

ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ. CalWORKs (Կալիֆորնիա նահանգի «Անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքների նյութական օգնության և աշխատանքի տեղավորման ծրագիր»), Փախստականներին տրվող դրամական օգնություն (Refugee Cash Assistance, RCA), Մարդկանց առևտրի և հանցագործությունների զոհ դարձած անձանց օգնության ծրագիր (Trafficking and Crime Victim Assistance Program, TCVAP) և Եկվորներին տրվող դրամական օգնություն (Entrant Cash Assistance, ECA):

ԵՐԵԽԱՅԻ ԱՊՐՈՒՍՏԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՈՒՄ. Այն վճարումը, որը պետք է Ձեր երեխայի կամ խորթ երեխայի համար կատարեք որևէ անձի: Ներառում է Ձեր տանն ապրող խորթ ծնողի կատարած վճարումները:

ԱՎԱՐՏՈՒՆ SAR 7. SAR 7-ն «ավարտուն» է, միայն երբ՝
- բոլոր ԱՅՈ/ՈՉ հարցերին պատասխաններ են տրվել, և
- բոլոր տվյալները լրացված են, և
- բոլոր հիմավորող փաստաթղթերը կցված են, եթե ձևը պահանջում է, և
- բոլոր պարտադիր ստորագրությունները դրված են ձևի վրա, և
- ձևը ստորագրված ու թվագրված է զեկույցի ամսվա վերջին օրից հետո:

ՀԱՄԱԽՄԱՌՆ ԳՈՒՄԱՐ. Ձեր վարձատրության վճարագրի կամ այլ վճարագրերի (գործազրկության նպաստներ, կենսաթոշակ և այլն) գումարը նախքան հարկերի, սոցիալական ապահովագրության համար կամ այլ նպատակներով որևէ հանում կատարելը:

ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ԿԱՄ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ. Դատարանը Ձեզ մեղավոր է ճանաչել փորձաշրջանի կամ վաղաժամկետ ազատման պայմանների խախտման համար: Սկզբնական հանցանքը, որի համար փորձաշրջանի կամ վաղաժամկետ կամ պայմանական ազատման հրաման է տրվել, կարող էր լինել քրեական հանցագործություն կամ զանցանք:

ԶԵԿՈՒՅՑԻ ԱՄԻՍ. SAR 7 ձևի վերևի մասում ցույց տրված ամիսը: Ձեկուցեք այդ ամսվա ընթացքում Ձեր ստացած ամբողջ եկամուտը և տեղի ունեցած փոփոխությունները:

ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՄԻՍ. Ձեկույցը ստորագրելու ու թվագրելու և այն հանձնելու ամիսը: Ներկայացման ամիսը ցույց է տրված SAR 7-ի վերևի մասում՝ զեկույցի ամսվա տակ:

ՎԿԱՅԱԳՐԻ ԲԱԺԻՆ
- Դուք պետք է ստորագրեք SAR 7 ձևը «կեղծ վկայության համար պատժի ահի ներքո»: Դա նշանակում է, որ երդվում եք (խոստանում եք), որ Ձեր ներկայացրած փաստերը ճշմարիտ են, ստույգ և լրիվ:
- Կեղծ վկայությունը հանցագործություն է, այսինքն՝ Դուք երդվել եք (խոստացել եք) ասել ճշմարտությունը, հետո անազնվություն եք դրսևորել:

ՀԻՇԵ՛Ք.
- Ձեկույցը հանձնելու ժամկետը ներկայացման ամսվա 5-րդ օրն է: Փորձեք այն հանձնել ժամանակին, որպեսզի խուսափեք Ձեր նպաստների հետ կապված խնդիրներից:
- Եթե զեկույցն ուշացվի (ներկայացման ամսվա 11-րդ օրից հետո), թերի լրացվի կամ չհանձնվի, ապա Ձեր նպաստները կարող են ուշացվել, փոխվել կամ դադարեցվել:
- Եթե վարչաշրջանն այդ ամսում չափազանց ուշ ստանա Ձեր զեկույցը, ապա, Ձեր զեկույցի հիման վրա նպաստները նվազեցնելու նպատակով, կարող է Ձեզնից գումար գանձվել գերավճարման համար, և Դուք պարտավոր կլինեք վերադարձնել այդ գումարը:
- Եթե հանձնելու պահին զեկույցը թերի է, Ձեզնից կպահանջվի լրացնել այն հարցերը, որոնց չեք պատասխանել, կամ ներկայացնել զեկույցի պահանջած հիմավորող փաստաթղթերը: Հնարավոր է, որ Ձեր նպաստներն ուշացվեն:
- Եթե Ձեր զեկույցը ստորագրեք ու թվագրեք նախքան ներկայացման ամսվա առաջին օրը, ապա Ձեզ կխնդրեն նորից ստորագրել ու թվագրել զեկույցը:
- Եթե վստահ չեք, թե ինչպես զեկուցել, ինչ զեկուցել, կամ թե ինչ հիմավորող փաստաթղթեր պետք է ուղարկեք, **դիմեք վարչաշրջան** :
- Եթե Ձեր կանխիկ դրամական օգնությունը դադարեցվում է, Դուք, այնուամենայնիվ, կարող եք իրավունակ լինել ստանալու CalFresh նպաստներ, նույնիսկ եթե այդ պահին աշխատանք ունենաք:
- Եթե Ձեր կանխիկ դրամական օգնությունը դադարեցվում է, Դուք, այնուամենայնիվ, կարող եք Medi-Cal ծրագրի շրջանակներում անվճար կամ էժան ապահովագրություն ստանալու իրավունք ունենալ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆ.
- Սոցիալական նպաստներին առնչվող խարդախություն կատարվում է այն ժամանակ, երբ չեք հայտնում տեղեկություններ կամ միտումավոր սխալ տեղեկություններ եք տրամադրում, որպեսզի փորձեք ավելի շատ նպաստներ ստանալ:
- Խարդախությունը հանցագործություն է:

ՏՈՒԳԱՆՔՆԵՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ՝ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԽԱՐԴԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ.
Եթե դատապարտված եք խարդախության համար, կամ որակազրկվել եք Ձեր իրավունակության որոշման համար պահանջվող տեղեկությունները դիտումավոր (միտումավոր) ճիշտ չներկայացնելու համար, ապա կարող եք զրկվել կանխիկ դրամական օգնության Ձեր բաժնեմասից: Թե ինչքան ժամանակով կզրկվեք կախված է հանցագործության բնույթից և նախկինում խարդախություն կատարած կամ չկատարած լինելու հանգամանքից: Հնարավոր է, որ նաև ստիպված լինեք վճարել մինչև $10000 տուգանք և (կամ) ազատազրկվել կամ բանտարկվել մինչև 3 տարի ժամկետով:

Ձեր կանխիկ դրամական օգնությունը կարող է դադարեցվել՝
- ոչ բոլոր փաստերը զեկուցելու կամ սխալ փաստեր հայտնելու համար. 6 ամիս առաջին անգամվա դեպքում, 12 ամիս՝ երկրորդ անգամվա, կամ **ընդմիշտ**՝ երրորդի դեպքում.
- ընտանիքի նույն անդամների համար ուրիշ գործով միևնույն ժամանակաշրջանում օգնություն ստանալու նպատակով մեկից ավելի դիմում հանձնելու համար. 2 տարի առաջին դատապարտման դեպքում, 4 տարի՝ երկրորդի, և **ընդմիշտ** երրորդի դեպքում.
- սոցիալական նպաստներին առնչվող հանցավոր խարդախության համար դատապարտման դեպքում սահմանված պատիժներն են՝ 2 տարի $2000-ը չգերազանցող հավելյալ նպաստների դեպքում, 5 տարի $2000-ից մինչև $4999 գումարների դեպքում, և **ընդմիշտ**՝ $5000 կամ ավելի մեծ գումարների դեպքում.
- **ընդմիշտ**. միաժամանակ երկու կամ ավելի վարչական շրջաններում օգնություն ստանալու նպատակով վարչական շրջանին մշտաբնակությունը հաստատող կեղծ փաստաթղթեր ներկայացնելու, վարչական շրջանին անիրավունակ երեխայի կամ գոյություն չունեցող երեխայի մասին դիտումավոր (միտումավոր) սխալ փաստեր տրամադրելու, խարդախության միջոցով $10000-ից ավելի դրամական նպաստներ ստանալու, դատարանի կամ վարչական լսումների կողմից խարդախության համար երրորդ անգամ դատապարտվելու դեպքում:

ՏՈՒԳԱՆՔՆԵՐ CalFresh ՆՊԱՍՏՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԽԱՐԴԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ.
Եթե դատապարտված եք խարդախության համար, կամ որակազրկվել եք Ձեր իրավունակության որոշման համար պահանջվող տեղեկությունները դիտումավոր (միտումավոր) ճիշտ չներկայացնելու համար, ապա Ձեր CalFresh նպաստները կարող են դադարեցվել 12 ամսով առաջին խախտման դեպքում, 24 ամսով՝ երկրորդի, և ընդմիշտ՝ երրորդի դեպքում: Դուք կարող եք տուգանվել մինչև $250000 և (կամ) ազատազրկվել կամ բանտարկվել 20 տարի ժամկետով:

Ձեր CalFresh **նպաստները կարող են դադարեցվել, եթե ընդհանուր իրավասության դատարանի կամ վարչական լսումների կողմից մեղավոր ճանաչվեք, որովհետև՝**
- CalFresh նպաստները փոխանակել եք հրազենի, զինամթերքի կամ պայթուցիկ նյութերի հետ կամ վաճառել եք դրանք ձեռք բերելու նպատակով: Ձեր CalFresh նպաստները կարող են դադարեցվել առաջին խախտման դեպքում.
- Դուք CalFresh նպաստները փոխանակել եք վերահսկվող նյութերի հետ կամ վաճառել եք դրանք ձեռք բերելու նպատակով: Ձեր CalFresh նպաստները կարող են դադարեցվել 12 ամսով առաջին խախտման դեպքում, և **ընդմիշտ** երկրորդի դեպքում.
- Դուք փոխանակել կամ վաճառել եք CalFresh նպաստներ, որոնք արժեին $500 կամ ավելի: Ձեր CalFresh նպաստները կարող են դադարեցվել **ընդմիշտ**.
- Դուք ինքնությունը հաստատող կեղծ փաստաթուղթ կամ մշտաբնակության վերաբերյալ կեղծ տեղեկություններ եք տրամադրել վարչական շրջանին՝ փորձելով CalFresh նպաստներ ստանալ միաժամանակ մեկից ավելի գործով: Ձեր CalFresh նպաստները կարող են դադարեցվել 10 տարով:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵ՛Ս ՍՅՈՒՍ ԿՈՂՄԸ